ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

«--------» «----------» 2021թ. **N ----------**

«ԲԱՋՄԱՋԱՆՈՒԹՅՈՒՆ» ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐՏԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Ի պատասխան 14.12.2022 թվականի հ. 473275 գրության

Հարգելի պարոն Առաքելյան,

Ստորև Ձեզ եմ տրամադրում տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 3-ի 536-Ն, 2018 թվականի նոյեմբերի 29-ի 1337-Ն, 2019 թվականի մայիսի 16-ի 590-Ն, 2019 թվականի նոյեմբերի 7-ի 1536-Ն, 2020 թվականի ապրիլի 23-ի 593-Ն, 2020 թվականի դեկտեմբերի 24-ի 2136-Ն, 2021 թվականի մայիսի 6-ի 711-Ն «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» որոշումների համաձայն, ստեղծվել է մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողով, համաձայն որի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետը ներգրավվել է Արմավիրի մարզային զորակոչային հանձնաժողովի կազմում՝ որպես հանձնաժողովի նախագահ և իրականացրել է օրենքով իրեն վերապահված լիազորությունները:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» N 1132-Ն որոշման 20-րդ կետով սահմանվում են շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի ապահովող մարմինները: Հիմք ընդունելով սույն որոշման պահանջները, Ձեր կողմից նշված տարածքային /տեղական/

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

զինկոմիսարիատների զորակոչային հանձնաժողովներում 2018 թվականի ամառայինից մինչև 2021 թվականի ամառային զորակոչերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանից ներկայացուցիչներ չեն ընդգրկվել:

3. 2018 թվականի ամառայինից մինչև 2021 թվականի ամառային զորակոչերի նախազորակոչային և զորակոչային միջոցառումների ընթացքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում զորակոչիկների նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքեր չեն արձանագրվել:

4. 2018 թվականի ամառայինից մինչև 2021 թվականի ամառային զորակոչերի իրականացման ընթացքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում քաղաքացիներից, նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի անձանցից, նրանց ներկայացուցիչներից, այլ շահագրգիռ անձանցից կամ կազմակերպություններից զորակոչիկի նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքերի մասին բողոքներ չեն ստացվել:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի և մարզպետի լիազորությունները նախազորակոչային և զորակոչային միջոցառումների անցկացման ուղղությամբ սահմանվում են ներքոգրյալ օրենքներով և իրավական ակտերով՝

1) Հայաստանի Հանրապետության «Պաշտպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված կարգով տարածքային կառավարման մարմիններն իրենց իրավասությունների սահմաններում մասնակցում են պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, պահեստազորային պատրաստության միջոցառումների և զորահավաքային զորակոչի իրականացման, զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրման գործընթացին,

2) Հայաստանի Հանրապետության «Տարածքային կառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է մարզպետի լիազորությունները պաշտպանության կազմակերպման բնագավառում, իսկ 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ մասնակցում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի կազմակերպման գործընթացին,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» N 1132-Ն որոշման 20-րդ կետով սահմանվում են շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի ապահովող մարմինները, 25-րդ և 26-րդ կետերով

սահմանվում են մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի գործառույթները:

22.12.2021

X

VERIFIED OCSP 22.12.2021 17:48:29 GMT+4

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ զորահավաքային նախապատրաստության բաժին
Ա. Լալայան
Հեռ. 0237/2-85-02